ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Երևանի հ.122 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի **դաստիարակի /1,17 դրույք/** թափուր տեղի համար**:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

-դիմում (Ձև1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և ետ վերադարձնում տնօրենին:

Եթե ներկայացված փաստաթղթերից մեկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը ուղղումներ կատարել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **30.01.2025 թ-ից մինչև 26.02.2025 թ-ը ներառյալ**, ամեն օր՝ **ժամը 10:00-17:00,** բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. մարտի 03-ին՝ ժամը 11:00-ին**, «Երևանի հ.122 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ **ք.Երևան, Արմենակյան 141:**

Տեղեկությունների համար զանգահարել **010-65-34-19** հեռախոսահամարով: